

ԵՎ ԼՈՆԴՈՆ

# ԳՈՐԾԱԴՈՒՆ ԱՐԵՑ



825  
—  
476

ՊԵՏՏՐՈՍ 1935 ՅԵՐԵՎԱՆ

2011-05



82 ԼԴ  
-76

ՁԵԿ ԼՈՆԴՈՆ

ևր

**ԳՈՐԾԱԴՈՒԼ ԱՐԵՑ**

Մ. ՊՈԼԼԱԻ ՄՇԱԿՈՒՄՈՎ  
ՆԿԱՐՆԵՐԸ Ս. ՎՈԼՈՒՑԿՈՒ  
ՌՈՒՍ. ԹԱՐԳ. Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գ  
Դ  
Ե  
ՁԵԿ  
8001

ՊԵՏՂՐԱՏ

1 9 3 5

ՅԵՐԵՎԱՆ



Պատ. խմբագիր՝ Ա. Հաբայան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Ա. Բալաբյան

### ԳՈՐԾԱԴՈՒԼ ԱՐԵՑ

— Յեթե դու վեր չկենաս, Ջո'ննի, յես քեզ տւտելու վոչինչ չեմ տա:

Այդ սպառնալիքը վոչ մի ազդեցութիւն չզործեց տղայի վրա: Նա շարունակում էր քնել: Տղայի ձեռքերն անգիտակցորեն սեղմվում, բուռնցք էյին դառնում, և նրանով նա ջղաձգորեն հարվածներ էր հասցնում ողբի մեջ: Այդ հարվածները նախատեսվում էյին մոր համար, բայց մայրը սովոր էր այդ բանին, և ճարպիտորեն խուսափելով հարվածներից, շարունակում էր թափահարել տղայի ուսերից:

— Հանգի՛ստ թող ինձ:

Դա հիվանդոտ, քնաթաթախ ճիչ էր, վոր հանդարտելով փոխվում էր վողորմելի հառաչանքի, այն ել մի կենդանու հառաչանքի, վորին տանջում են:

Մայրը վոչ մի ուշադրութիւն չէր դարձնում: Նա թախծալի արտահայտութեամբ աչքերով և խոնջացած դեմքով մի կլին էր: Նրան ամենևին չէր դարմացնում այդ տեսարանը, քանի վոր ամեն որ կրկնվում էր այն: Մայրն սկսեց դեն քաշել տղայի վրայից վերմակը, և վերջինս դադարեց ձեռքերը թափահարելուց

ու կատաղությամբ պինդ բռնեց վերմակից։ Մայրը լարեց իր բոլոր ուժերը, և Ջոննին ստիպված եր գիջել։ Նա տեղից վեր կացավ և բոբիկ վտաքերով կանգնեց հասակի վրա։ Հենց նույն բոպեյին մայրը բռնեց նրա ուսերից և ուժգին ցնցեց։ Ջոննին աչքերը բաց արեց։

— Վեր եմ կենում, — շնջաց նա։

Մայրը վերցրեց ճրագը և շտապ դնաց խոհանոց։

— Շո՛ւտ արա, — հիշեցրեց մայրը նրան։

Ջոննին սկսեց հագնվել, ուշադրություն չդարձնելով մթությանը, իսկ յերբ հագնվեց, դնաց խոհանոց լվացվելու։ Մապոնը ցեխոտված եր և չեր փրփրում։ Նա չեր ել փորձում ստիպել, վոր փրփրի, միայն թեթև չփչփացրեց սառը ջրով և սրբեց թաց, կեղտոտ, պատառտված յերեսրբիչով։

— Դու գոնե մի անգամ կարգին լվացվեյիր, — նախատեց նրան մայրը։

Ջոննին վոչինչ չպատասխանեց։

Մայրը վերցրեց կաթսայի վրայից կոտրած խուփը և յերկու բաժակ սուրճ լցրեց։ Նա արագ-արագ, համարյա թե կտորներն առանց ծամելու կերավ հացը, վրայից տաք, պղտոր հեղուկ խմելով։ Ջոննին կարծում եր, վոր դա սուրճ ե և այն ել հրաշալի սուրճ։ Նա յերբեք իսկական սուրճ չեր խմել։ Հացն ուտելուց հետո՝ Ջոննին հարցական հայացք նե-



տեց, կարծես թե հարցնելով՝ հետո ի՞նչ կլի-  
նի: Մայրն իսկույն նկատեց այդ:

— Դե՛, խոզություն մի՛ անի, Զո՛ւննի,—  
ասաց նա:— Դու քո բաժինն ստացար: Քո յեղ-  
բայրներն ու քույրերը փոքր են քեզանից:

— Նա վոչինչ չառարկեց այդ հանդիմանու-  
թյանը, խմեց իր սուրճը պրծավ, բերանը  
ձեռքով սրբեց և ուղեց վեր կենալ:

— Սպասի՛ր մի րոպե,— արագ ասաց մայ-  
րը:— Յես կարծում եմ, վոր կարելի չե քեզ  
համար հացի ելի մի փոքրիկ, բոլորովին բա-  
րակ կտոր կտրել:

Դա փոքրիկ խորամանկություն էր մոր  
կողմից: Ձեացնելով իբր թե վորդու հա-  
մար մի կտոր հաց է կտրում, նա հենց իր հա-  
մար կտրտած յերկու կտորներից մեկը, տվեց  
նրան, և սուրճն իր բաժակից ածեց նրա բա-  
ժակի մեջ:

Հեռվում լավող յերկարատե և շարունակ-  
վող սուլոցը նրանց յերկուսին ել ստիպեց վեր  
կենալ: Նա նայեց թիթեղյա ազդարարին (բու-  
դելնիկ), վոր դարակի վրա յեր: Սլաքները  
ցույց եյին տալիս հինգ անց կես: Գործարանի  
բոլոր մարդիկ արդեն գարթնել եյին քնից:  
Մայրը շալը գցեց ուսերին:

— Պետք է վազել,— ասաց նա, ոջախի  
կրակը հանգցնելով:

Նրանք խարխափելով իջան սանդուխքով  
և դուրս յեկան տնից: Դուրսը պարզ էր և

ցուրտ, և Զոննին ցնցվեց թարմ օդի առաջին  
հպումից: Աստղերը դեռ չեյին սկսել գունատ-  
վել յերկնքում, և ամբողջ քաղաքը պատած  
էր գիշերվա խավարով:

Լուսթյան մեջ տասնհինգ րոպե գնալուց  
հետո, մայրը թեքվեց դեպի աջ:

— Չուշանաս,— յեղավ նրա վերջին  
խրատը:

Տղան վոչինչ չպատասխանեց և հանդարտ  
չարունակեց իր ճանապարհը:

Գործարանների շրջանում դռներն ամեն  
տեղ բաց եյին, և նա շուտ խառնվեց այն ամբո-  
խի հետ, վորը մթության մեջ շտապ առաջ էր  
չարժվում: Յերբ Զոննին մտտեցավ իր գոր-  
ծարանի դռանը, չչակի ձայնը նորից լսվեց:  
Նա դեպի արևելք նայեց: Շենքերի տանիքների  
վրա սկսում էր նշմարվել դալիավուն լույս:  
Այդ րոպեյին միայն նա տեսավ ցերեկվա լույ-  
սը և իսկույն բաժանվեց նրանից, խառնվելով  
բանվորների ամբոխի հետ:

Նա բռնեց իր տեղը, բազմաթիվ յերկար շար-  
քերից մեկում՝ մեքենաների հետևը: Նրա ա-  
ռաջ, փոքրիկ կոճերով լիքը արկղի վրա, արագ  
պտտվում եյին մեծ ճախարակները: Նրանց վը-  
րա նա փոքրիկ կոճերից ջուտե թելեր էր փա-  
թաթում: Հասարակ աշխատանք էր: Արագու-  
թյուն— ահա այն ամենը, ինչ վոր պահանջում  
էր նրանից: Փոքրիկ կոճերն այնքան արագ եյին  
դատարկվում, և այնտեղ թել կծկող մեծ ճա-

խարակներն այնքան շատ եյին, վոր վոչ մի ազատ բոպե չկար:

Նա աշխատում էր մեքենայի նման: Յերբ փոքրիկ կոճը դատարկվում էր, նա ձախ ձեռքով կանգնեցնում էր ճախարակը և ճարպկորեն բռնում էր թելի փախչող տուտը, իսկ աջ ձեռքով՝ փոքրիկ կոճի թելի ազատ ծայրը: Նրա մատները կայծակի պես եյին փայլում, յերբ նա թելերը կապում էր հանգուցով և բաց էր թողնում կոճը: Այդ հանգուցներից ավելի դժվար բան չկար: Մի քանի տղաներ խարդախություն եյին անում և մեքենան նրանց մոտ յերկար ժամանակ չէր աշխատում, վորովհետև նրանք դատարկված փոքր կոճերը նորերով չեյին փոխարինում: Այդպիսի տղաներին հետևելու համար վերակացու կար: Նա մի անգամ բռնեց Ջոննիի հարևանին և քաչեց նրա ականջները:

— Մտիկ տուր Ջոննիին, — ինչո՞ւ դու յեւ այնպես չես աշխատում ինչպես նա, — հարցրեց բարկացած վերակացուն: Ջոննիի անտարբեր դեմքը վոչինչ չէր արտահայտում, յերբ նա լըսեց, վոր իրեն ընդունում են իբրև որինակ: Նա գիտեր, վոր որինակելի աշխատող էր: Նրան այնքան հաճախ եյին ասում այդ: Որինակելի աշխատավորից նա փոխվեց որինակելի մեքենայի: Յերբ նրա մոտ աշխատանքը լավ չէր գընում, այդ պատահում էր հենց նույն պատճառով, ինչպես և մեքենայինը — վատ նյութի շնորհիվ: Նրա համար նույնպես անհնարին էր

սխալ գործել, ինչպես մեխ շինող մեքենայի համար, յեթե մեքենան սարքի յե, դուրս չպրտել սխալ պատրաստած մեխը:

Յեվ դրա մեջ զարմանալու վոչինչ չկար: Նա ամեն ժամանակ, իր ամբողջ կյանքում, գործ ուներ մեքենաների հետ: Մեքենաները նրա համար համարյա հարազատներ եյին, և նա մեծացել ու դաստիարակվել էր նրանց մոտ: Ուղիղ տաններկու տարի առաջ այդ նույն գործարանում, ջուլհականոցում վորոշ հուզմունք առաջացնող մի դեպք կատարվեց: Ջոննիի մայրն իրեն վառ էր զգում: Նրան պառկեցրին հոնդացող մեքենաների մեջտեղը: Յերկու տարիքավոր կնոջ ստիպեցին թողնել իրենց զազգյահաները և մոտենալ նրան: Վերակացուն էլ հենց այնտեղ ներկա յեր: Մի քանի բոպեյից ջուլհականոցը մի մարդով ավելացավ:

Դա Ջոննին էր, վոր ծնվեց ջուլհակային մեքենաների հոնդյունների տակ և իր աշխարհ գալու առաջին վարկյանից ներս ծծելով տաք, խոնավ ոգը, վոր հազեցած էր ջուլհականոցում սավառնող բամբակի մանրուքով: Նա իսկույն ևեթ սկսեց հազալ, աշխատելով ազատել իր թոքերը փոշուց. այդ պատճառով էլ նա հազում էր այն ժամանակվանից:

Ջոննիի կողքին աշխատող տղան հեծկըտում էր ու խզզացնում: Նրա դեմքն ատելություն էր արտահայտում դեպի վերակացուն, վոր չէր հեռացնում նրանից իր ահեղ հայացքը,

բայց և այնպես կոճերը կծկվում և յին կանոնա-  
վոր: Տղան սոսկալի անեծքներ եր թափում իր  
սուղև պատվոյ կոճերի դիրին: Ժամը տասնը-  
մեկին վիլահանոցում ամեն ինչ իրար անցավ:  
Ջոննիի հակառակ կողմն աշխատող մի վոտանի  
տղան արագ սուզվեց կոճերի դատարկ սայլակի  
մեջ: Նա կորավ այնտեղ իր հենացուպի հետ  
միասին: Գործարանի կառավարիչը ներս մը-  
տավ, լավ հագնված մի յերիդասարդի ուղեկ-  
ցությամբ: Դա «տեսուչն» եր:


Անցնելով տղաների կողքից, նա աչալուրջ  
նայում եր նրանց և յերբեմն կանգ եր առնում  
ու հարցեր տալիս: Նա այդ անելիս ստիպված  
եր գոռալ ամբողջ ուժով և այդ ժամանակ նրա  
դեմքը ծիծաղաշարժ կերպով ձգվում եր իրեն  
լսել ստիպելու ջանքից: Տեսուչն ուշադրու-  
թյուն դարձրեց Ջոննիի վրա, բունեց նրա թևից  
և հետ քաշեց մեքենայից, բայց հետո իսկույն  
զարմանքով բաց թողեց նրա ձեռքը:

— Բավականին նիհար ե, — ասաց կառա-  
վարիչը, ժպտալով:

— Վոնց վոր թութակ լինի: — հետևեց պա-  
տասխանը: — Նայեցեք նրա վոտաներին: Տղան  
ուսիս<sup>1)</sup> ունի: Ամենայն հավանականությամբ  
նա թորթախտ կամ ընկնավոր կղանա:

Ջոննին լսում եր, բայց չեր հասկանում:

<sup>1</sup> Ռախտ, յերեխաների հիվանդություն ե, վորն  
արտահայտվում ե վողնաշարի և վոտքերի վոսկրների  
փափկելով ու ծովելով:



Նրան ամենևին չեյին հետաքրքրում դալիք անակնկալությունները: Նրան անհանգստացնում էր այդ բոպեյին իրեն սպառնացող անակնկալությունը՝ հանձին տեսչի:

— Լսի՛ր, տղա, միայն թե յես կցանկանայի, վոր դու ուղի՛ղն ասես ինձ, — ասաց տեսուչը, մոտ կռանալով տղայի ականջին: — Քամի տարեկան էս.

— Տասնչորս, — ստեց Ջոննին:

— Արտաքուստ նա առնվազն տասնվեց կլլինի, — նկատեց կառավարիչը:

— Կամ վաթսուն, նկատեց տեսուչը:

Նրանք առաջ գնացին, իսկ Ջոննին վերադարձավ իր աշխատանքին, գոհ, վոր վտանգն անցավ: Բայց մի վտանանի տղան այնքան էլ բախտավոր չէր: Տեսչի սուր աչքը տեսավ նրան: Խեղճ տղայի շրթունքները դողում էին, իսկ դեմքը մի այնպիսի արտահայտություն ուներ, ինչպիսին ունենում է այն մարդը, վորին մեծ դժբախտություն է պատահել: Վերակացուն զարմացավ, կարծես թե առաջին անգամ էր տեսնում տղային, իսկ կառավարչի դեմքն արտահայտում էր բարկություն և անբավականոթյուն:

— Յես նրան ճանաչում եմ, ասաց տեսուչը: Նա տասներկու տարեկան է: Մի տարվա ընթացքում յես նրան յերեք դործարանից արձակեցի: Այս արդեն չորրորդն է:

Նա դիմեց մի վտանանի տղային:

— Դու ինձ ազնիվ խոսք տվիր, վոր դպրոց կդնաս:

Մի վտանանի տղայի աչքերն արցունքով լցվեցին:

— Խղճացե՛ք, պարո՛ն տեսուչ, մեր յերկու յերեխաները մեռան և մենք ստակայի աղքատ ենք:

— Իսկ ինչո՞ւ յես դու այդպես հազում, — հարցրեց նրան տեսուչը, կարծես մեղադրելով վոճրագործության մեջ:

Յեվ մի վտանանի տղան ցանկանալով մի տեսակ իր անմեղությունն ապացուցել, պատասխանեց.

— Այդ վո՛չինչ: Յես մըսել եմ անցյալ շաբաթ, պարո՛ն տեսուչ, ահա և բոլորը:

Վերջիվերջո մի վտանանի տղան դուրս յեկավ վիլականոցից տեսչի հետ, վորին ուղեկցում էր վրդովված կառավարիչը: Դրանից հետո, միտրինակ աշխատանքը նորից սկսվեց: Անցավ յերկարատե առավոտը և ավելի յերկարատե հետճաշյա ժամանակը և սուլիչը սուլեց աշխատանքի վերջանալու ժամը: Արդեն մութն ընկել էր, յերբ Ջոննին գործարանից տուն էր վերադառնում:

Ընթրիքին ամբողջ ընտանիքը հավաքվել էր. — դա միակ ժամանակն էր որվա ընթացքում, յերբ Ջոննին հանդիպում էր իր փոքր յեղբայրների և քույրերի հետ: Նա տանել չէր կարողանում նրանց աղմկոտ և ուրախ ջահելությունը: Նրա սեփական մանկությունը չա-



փազանց հեռու յեր մնացել՝ հետևում: Նա նման  
 էր այն ջղալին ծերունուն, վորին ջահելների  
 շատխոսությունը սոսկալի ճանճրութե  
 պատճառում: Ընթրիքը վերջացնելուց հետո,  
 Ջոննին աթոռը հետ քաշեց և վեր կացավ սեղա-  
 նի մոտից: Մի րոպե նա մտածեց, թե ո՞ւր գնա:  
 Անկողին, թե դեպի դրսի դուռը և, վերջապես,  
 ուղևորվեց դեպի վերջինը: Նա նստեց պատշ-  
 զամբի ստորին աստիճանի վրա, ծնկները ցցեց,  
 դուրս պրծացնելով իր նեղլիկ ուսերը՝ ար-  
 մունկները ծնկների վրա դրեց և կզակով հեն-  
 վեց ձեռքերին:

Այդպես նստած նա վոչինչի մասին չէր  
 մտածում: Նա ուղղակի հանդատանում էր:  
 Նրա յեղբայրներն ու քույրերը նրա հետևից  
 անմիջապես դուրս յեկան և ուրիշ յերեխաների  
 հետ աղմկելով խաղում էին, նրանից վոչ հե-  
 ոու: Նրանք գիտեցին, վոր Ջոննին մտալ է և  
 դյուրագրգիռ է վորպեսզի չարացնեն նրան,  
 յերեխաները մտա վազեցին և ծիծաղաչարժ-  
 կերպով զանազան յերգեր էին յերգում նրա  
 առաջ:

Պարագլուխը նրա յեղբայր՝ Ուիլն էր, վո-  
 րի տասը տարին նոր էր լրացել: Սկզբում Ջոն-  
 նին անիծեց նրանց, իսկ հետո վճռեց, վոր  
 չարժե ուշադրություն դարձնել և ընկղմվեց  
 մտալ լուսթյան մեջ: Ջոննին զայրացնում էր  
 այն, վոր Ուիլը մեծ պարտականություն ունե-  
 նալով իր հանդեպ՝ վոչ մի յերախտագիտու-



Թյունն չի ցուցարեւորում դրա համար: Այն տա-  
րիներում, յերբ Ջոննիին դեռ յերեխայական  
խաղերն էյին զբաղեցնում, նա իր ազատ ժամ  
մանակվա մեծ մասն ստիպված էր նվիրել  
փոքրիկ Ուիլի հոգատարությանը:

Նրանց մայրն, ինչպես և հիմա, աշխատում  
էր գործարանում, ամբողջ ուրը տանը չէր լի-  
նում, և ստիպված, Ջոննին էր փոխարինում  
հորն ու մորը: Յեղբոր հոգատարությունը,  
բայտ յերևույթին, Ուիլի ոգտին էյին: Նա լավ  
կազմվածք ուներ, ամուր, նույնպիսի հասակով  
ինչպես իր մեծ յեղբայրը և նույնիսկ նրանից  
ավելի հաստ: Միևնույն բանը պետք է ասել և  
նրանց բնավորությունների վերաբերյալ: Ջոն-  
նին թվում էր ընկճված, ճնշված. այն ինչ նրա  
փոքր յեղբոր կենսական ուժերի ավելցուկն աս-  
ես ուզում էր դուրս թափվի:

Տղաները շարունակում էյին չարացնել  
Ջոննիին: Ուիլը պարելով նայում էր ու լե-  
զուն հանում:

Վերջապես Ջոննին համբերությունը կորց-  
րեց, նա թափով հրեց Ուիլին, վեր գցեց նրան,  
իսկ հետո բռնեց ու յերեսի վրա բռնեց ցեխի  
մեջ:

Բուր յերեխաները յերկչոտ ճիչ արձակե-  
ցին:

Աղմուկին վրա հասավ մայրը, հուզմուն-  
քից գունատ դեմքով:

— Ինչո՞ւ նա ձեռք չի քաշում, — պատաս-

խանեց Ջոննին մոր հանդիմանություններին:  
— Թի՞թե նա չի տեսնում, վոր յես հոգնած եմ:

— Յես նույնպես մեծ եմ, ինչպես և դու, —  
բարկացած պատասխանեց Ուիլը, վորի ար-  
ցունքոտ դեմքը կեղտոտվել էր ցեխով և արյու-  
նով, — յես հիմա նույնպիսին եմ, ինչպես և  
դու, իսկ յերբ ավելի մեծ լինեմ, կձեծեմ  
քեզ... ա՛յ, կտեսնես, վոր յես անսլաւածաւ կա-  
նեմ այդ:

— Դու պետք է աշխատանքի դնաս, վնր  
այդպես մեծ ես, — փնթփնթաց Ջոննին: —  
Դա արդարացի կլինի, դու պետք է աշխատես:


— Բայց նա չափազանց ջահել է, — առարկեց  
մայրը: — Նա դեռ բոլորովին փոքրիկ տղա յէ:

— Յես նրանից փոքր էյի, յերբ սկսեցի  
աշխատել...

Ջոննին դեռ ելի մի քանի խոսք էր ուզում  
ասել անարդարացի վերաբերմունքի մասին իր  
նկատմամբ, բայց միտքը փոխեց և բարկացած  
հետ դառնալով, տուն դնաց: Սենյակի դուռը  
բաց մնաց, վորպեսզի խոհանոցի տաքությունը  
այնտեղ հասնի: Կիսախավարի մեջ հանելիս,  
նա լսում էր մոր խոսակցությունը՝ իրենց հա-  
րևանուհու հետ:

— Չե՛մ հասկանում, ի՞նչ է պատահել Ջոն-  
նիին, — լավում էր խոհանոցից: — Նա առաջ  
այդպես չէր: Նա այնքան համբերատար էր...  
բայց և այնպես նա լավ տղա յէ, — վրա բերեց  
մայրը, կարծես արդարացնելու համար: — Նա

3976  
37208



աշխատում ե բարեխիղճ. և մեկ ել, վոր նա չափազանց շուտ ե սկսել աշխատել: Բայց յես մեկ զավոր չեմ գրանում: Յես անում եմ այն ամենը, ինչ վոր կարող եմ:

Խոհանոցից լավեց մոտ հեծկլտոցը, և Ձոննին ականջ դնելով այդ հեծկլտոցին, փընթփնթաց ինքն իրեն, աչքերը փակելով. «Այ՛, յես իմ ամբողջ կյանքում բարեխիղճ եմ աշխատել»: Հետևյալ առավոտյան Ձոննին դարձյալ կւմում եր մոր հետ, յերբ վերջինս արթնացնում եր նրան: Հետո աղքատիկ նախաճաշը, մթնով գնալը, ցերեկվա գունատ ճառագայթը, վոր աների կտուրների վրայից եր յերևում, յերբ նա թիկունքն եր դարձնում դեպի նրանց և հսկիչ դռնով մտնում եր գործարան: Այդպես եյին որերն անցնում իրար հետևից, և նրանք բոլորը միատեսակ եյին:

Բայց և այնպես կյանքի մեջ բազմազանություն ել եր պատահում—այդ այն եր՝ յերբ նա մի աշխատանք փոխարինում եր մի ուրիշով, կամ թե՛ յերբ հիվանդ եր լինում: Յերբ Ձոննին վեց տարեկան եր, նա փոխարինում եր հորն ու մորը, Ուիլին և մյուս յերեխաներին, վորոնք դեռևս փոքր եյին: Յոթ տարեկանից նա սկսեց գնալ Չուտի գործարանը թեև կծկելու համար: Յերբ լրացավ նրա ութ տարին, նա ուրիշ գործարան գնաց աշխատելու: Այստեղ Ձոննին շարաթական յերկու դրոլար<sup>1)</sup> եր ստանում, իսկ

<sup>1)</sup> Դրոլարը—արծաթե դրամ ե, մոտ յերկու ուրբ:

յերկու դրոլարը, ուղիղ այնքան ե, ինչքան վոր հարկավոր ե քաղցից չմեռնելու համար:

Բայց յերբ նրա իննը տարին լրացավ, նա զրկվեց աշխատանքից. դրա պատճառը կարմրուկն եր: Յերբ առողջացավ, նա իր համար աշխատանք գտավ ապակու գործարանում: Վարձատրությունն այստեղ ավելի լավ եր և աշխատանքը ճարպկություն եր պահանջում:

Դա գործարքային աշխատանք եր, և նա մորքան արագ եր աշխատում, այնքան ավելի յեր ստանում:

Աշխատանքը շատ պարզ եր. պետք եր խցաններ կապել ապակե սրվակներին: Նրա գոտուց կախված եր կապու թելերի մի փունջ: Նա սրվակները վտռքերի առաջ դնում եր հատակին այնպես, վոր կարողանար աշխատել յերկու ձեռքով:

Նստած, կռանալով սրվակների վրա ծնկների վրայով՝ այնպես եր ծավլում, վոր նրա նեղլիկ ուսերը դուրս եյին պրծնում առաջ. նա աշխատում եր որը տասը ժամ, մեջքը չուղղելով: Դա շատ եր վնաս թոքերի համար, բայց դրա փոխարեն նրան հաջողվում եր սրական յերեք հարյուր դյուժին սրվակների աշխատանքը վերջացնել:

Կառավարիչը պարծենում եր նրանով և այցելուններ եր բերում, վոր նայեն նրան: Տասը ժամվա ընթացքում նրա ձեռքով յերեքհարյուր դյուժին սրվակներ եյին անցնում:

Ջոննին աշխատում էր նույնպիսի արա-  
դությամբ, ինչպես մեքենան: Դրա հետեւան-  
քով նա դարձավ շղային և նույնիսկ յերազում  
էլ սկսեց թափահարել և մատները շարժել:  
Նրա դեմքը դունաւոյեց և հազն ուժեղացավ:  
Հետո, թոքերի բորբոքում առաջ յեկավ և նա  
կորցրեց աշխատանքը՝ ապակու գործարանում:

Կազդուրվելով Ջոննին վերադարձավ ջու-  
տի գործարան: Այն ժամանակվանից արդեն  
վնջինչ չփոխվեց, և հետեւյալ քրը կրկնվում էր  
այն, ինչ վոր կար նախորդակին:

Ջոննին շատ շուտ հասունացավ: Յոթ տա-  
րեկան հասակում, յերբ նա իր առաջին աշխա-  
տավարձն ստացավ, սկսվեց նրա պատանեկու-  
թյունը: Անկախութեան զգացմունքն արթնա-  
ցավ նրա մեջ, և մոր ու վորդու հարաբերու-  
թյունները փոխվեցին: Իբրև աշխատավոր և  
ընտանիք կերակրող, նա իրեն մոր հետ պահում  
էր ավելի շուտ, իբրև հավասարի հետ: Ջոն-  
նին լրիվ արբունքի հասավ, յերբ լրացավ նրա  
տասներեկ տարին, յերբ նա վեց ամսով գիշե-  
րային հերթապահութեան մտավ:

Այն ժամանակ Ջոննիի կյանքում զանազան  
մեծ դեպքեր տեղի ունեցան: Նրանցից մեկն  
այն օրն էր, յերբ մայրը մի քանի սալոր գնեց:  
Յերկրորդն այն էր, յերբ մայրը կաթով ձվա-  
ձեղ արեց: Դրանք իսկական դեպքեր էին: Նա  
գոհունակութեամբ էր հիշում այդ մասին: Յեւ  
յերկու անգամ էլ մայրը պատմում էր մի զար-

մանալի ուտելիքի մասին, վոր նա յերազում  
էր մի կերպ գլուխ բերել— «լողոցող կղզին»,  
ինչպես նա անվանում էր— «ավելի լավ է, քան  
կաթի ձվաձեղը»:

Մի քանի տարի անընդհատ Ջոննին յերա-  
զում էր այն որվա մասին, յերբ նա կնատի  
սեղանի առաջ, իսկ իր առաջ դրած կլինի «լո-  
ղացող կղզին»:

Մի անգամ Ջոննին ճանապարհին մի հաս-  
արծաթե կվարտեր<sup>1)</sup> գտավ: Դա յել էր մեծ  
դեպք նրա կյանքում: Նա գիտեր, թե ինքը  
ինչպես պիտի վարվեր, յերբ նա տեսավ գետնի  
վրա ընկած դրամը: Սովորաբար տանն ուտելիք  
քիչ կար, այդ պատճառով էլ նա իր գտած դրա-  
մը տուն պիտի բերեր: Բայց Ջոննին յերբեք իր  
վրա փող չէր ծախսում, սակայն նա տանջա-  
լիորեն քաղցր բան էր ցանկանում: Յեւ նա  
վճռեց՝ ծախսել կվարտերը քաղցր բանի վրա:

Հետագարձ հայացք գցելով անցյալի վրա,  
Ջոննին միշտ հիշում էր այդ դեպքը, վորպէս  
միակ կարևոր վտճարագործություն, վոր նա  
կատարել էր կյանքում և այդ կապակցութեամբ  
նրա մեջ արթնանում էին խղճի կշտամբանք-  
ները: Այդ նրա կյանքի մեջ միակ սև բիծն էր:  
Ջոննին անբավական էր, վոր ծախսեց այդ  
կվարտերը, նա կկարողանար ավելի տեղին

1) կվարտերը—քառորդ դոլար է, այսինքն՝ մոտ  
50 կոպեկ:

դործածել այն: Հիշելով անցյալը, նա հազար անգամ ծախսեց իր կվարտերը և ամեն անգամ մեկը մյուսից ավելի տեղին:

Յերբ Չոննին տասնըչորս տարեկան դարձավ, նա անցավ ոսլայադործի մոտ աշխատելու: Իսկ իր տասնվեցերորդ ծնունդը նա տոնեց, անցնելով ջուլհականոց և դազգյաճ ստանալով: Այստեղ նա անցավ դործարքային աշխատանքի և հրաչայի կերպով գլուխ բերեց այն:

Յերկրորդ տարեվերջին Չոննին արդեն ավելի շատ եր վաստակում քան ամենալավ ջուլհակը, և յերկու անգամ ավելի, քան չարքային աշխատավորը: Այնուամենայնիվ նրա աճող աշխատավարձը դարձյալ չէր ծածկում կարիքը: Յերեխաները մեծացել էին և արդեն դպրոց էին գնում, իսկ դասագրքերը փող արժեյին: Բացի դրանից, վորքան արագ եր աշխատում նա, այնքան արագ ել բարձրանում եր ամեն բանի գինը: Նույնիսկ բնկարանի վարձը շատացավ, չնայած վոր տունը փուլ եր գալիս՝ վերանորոգության պակասությունից:

Չոննին բարձրահասակ եր դարձել և հիմա ավելի նիհար եր թվում, քան առաջ: Նա ե՛լ ավելի ջղային դարձավ: Չոննիության հետ նա դարձավ մռայլ և դյուրագրգիռ: Յերեխաները բազմաթիվ և դառը փորձերից իմացան, թե վորքան վտանգավոր ե կովել նրա հետ:

Չոննիի համար ուրախություն չկար կյան-

քի մեջ: Նա յերբեք չէր տեսնում, թե ի՞նչպես էլին անցկենում որերը: Նա բանավոր անասուն եր:

Մի անգամ, ուշ գարնանը Չոննին յերեկոյան տուն եր վերադառնում աշխատանքից, անսովոր հոգնածություն զգալով: Նա մռայլ նստեց սեղանի առաջ և լուռ սկսեց ուտել այն, ինչ վոր կար նրա առաջ: Յերեխաները սակայն, հրձվում էլին և շրթունքները ծլրպացնում, բայց Չոննին կարծես չէր նկատում այդ:

— Դու գիտե՞ս թե ի՞նչ ես ուտում. — հարցրեց նրան վերջապես մայրը, անբավական յեղանակով:

Չոննին անմտորեն նայեց իր առաջ դրած սկուտեղին, իսկ հետո նույնպիսի հայացք սեւեւեւեւ և մոր վրա:

— «Լողացող կղզի» — հայտարարեց նա հանդիսավոր կերպով:

— «Լողացող կղզի» — խմբով աղաղակեցին յերեխաները:

— Ո՛ր, — ասաց Չոննին և հետո յերկու-յերեք կտոր կուլ տալով, ավելացրեց. — յես ինչ-վոր այսոր չեմ ցանկանում ուտել:

Նա դալար վայր դրեց, աթոռը հետ քաշեց, և ծանր վեր կացավ սեղանի առջևից:

— Յես կարծում եմ, վոր ավելի լավ ե գնամ քնեմ:

Յեվ վտանքըր սովորականից ավելի քաշ տալով, Չոննին անկողնու մոտ գնաց: Հանվելը

նրա համար հանկարծ դարձավ ծանր աշխատանք, սոսկալի տանջանք, և նա նույնիսկ լաց յեղավ, յերբ ընկավ անկողնու վրա, նույնիսկ կոշիկները չհանելով: Ձեռքերում նա մեծ ծանրություն էր զգում: Գոտկատեղի վողերն անտանելի կսկծում էին: Բոլոր վոսկրներն էլին կսկծում: Յեվ գլխի մեջ սկսվեց միլիոնավոր դազդյահների ճիչը, թխթխկոցը, ճռճռոցը, դղրդոցը:

Հետեվյալ օրը Ջոննին աշխատանքի չբազմաց: Մայրը սովորականի պես դնաց գործարան, բայց նախորոք ուղարկեց բժշկի հետևից: Բժիշկն ասաց, վոր ամենաուժեղ գրիպով է բռնված:

Իա հիվանդության ամենածանր տեսակն էր և Ջոննին մի շաբաթից հետո միայն, սկսեց մեր կենալ անկողնից և ման գալ սենյակում: Ջուլհականոցի դիրեկտորն այցելեց նրան առողջանալու առաջին օրը:

—Մա լավ ջուլհակ ե, ասաց կառավարիչը նրա մօրը:— Նրա տեղը մնում է իր համար: Նա կարող է վերագառնալ աշխատանքի մի շաբաթից հետո, յերկուշաբթի օրը:

— Ինչո՞ւ չնորհակալություն չես հայտնում Ջոննի, — անհանգստությամբ հարցրեց մայրը:

— Նա այնպես հիվանդ էր և մինչեմ հիմա ոչեռ բուրորովին չի կազդուրվել, — աշխատում էր արդարացնել նրան մայրը, կառավարչի առաջ: Ջոննին նստած էր կորացած և համառորեն



ցած եր նայում: Նա այդ դրուժյամբ յերկար նստեց կառավարչի գնալուց հետո: Յերբեմն նրա շրթունքները շարժվում էյին: Թվում էր, վոր նա զբաղված էր ինչ-վոր հաշիվներ անելով:

Հետեյալ որը Ջոննին դուրս յեկավ պատշգամբ, հենց վոր արևը տաքացրեց, և նստեց աստիճանի վրա: Նա թուղթ ու մատիտ ունեց, վորոնցով նա իր հաշիվներն էր անում, և այդ ըստ յերևույթին, շատ դժվար էր նրա համար:

—Միլիոնից հետո ի՞նչ է գալիս —, հարցրեց նա Ուիլին, յերբ վերջինս դպրոցից ատեն վերադարձավ: — Յեվ ինչպե՞ս ստանալ այդ:

Յերեկոյան դեմ Ջոննին վերջացրեց իր առաջադրած խնդիրը: Յեվ հետո ամեն որ, բայց արդեն առանց թղթի և մատիտի նա դուրս էր գալիս և նստում պատշգամբում:

Կիրակի որը, պատշգամբում նստած, նա մի քանի անգամ բարձր ծիծաղեց, մեծ անհանգստություն պատճառելով մորը, վորն արդեն յերկար տարիներ չէր լսել, թե վո՞նց է նա ծիծաղում:

Հետեյալ առավոտյան, նա դեռ լուսանալուց առաջ գնաց զարթեցնելու նրան: Մի ամբողջ շաբաթ Ջոննին քնեց, ինչքան ուզում էր, և դրա համար ել հեշտ արթնացավ: Նա չհակառակեց և փորձ չարեց պահել վերմակը, յերբ մայրը քաշում էր այն: Նա հանգիստ

պառկած էր անկողնում և նույնիսկ հանգստությամբ ասաց.

Չո՛ւր ես անհանգստացնում, մա՛յր:

—Դու կուշանաս — ասաց մայրը, կարծելով վոր վորդին խոսում է հենց այնպես, քնաթաթախ:

— Յես զարթնեցի, մայր, և նորից եմ կրկնում քեզ. իզուր ես անհանգստացնում: Դու կարող ես հանգիստ թողնել ինձ: Յես չե՛մ ուզում վեր կենալ:

—Բայց այդ դեպքում դու կկորցնես աշխատանքը, — գոռաց մայրը:

— Յես չե՛մ ուզում վեր կենալ — կրկնում էր նա տարորինակ, անտարբեր ձայնով:

Մայրն ինքն ել աշխատանքի չգնաց այդ որը: Դա հիվանդություն էր, վոր զերազանցում էր իր իմացած բոլոր հիվանդություններին: Դողերոցքն ու գառանյանքը նա կարող էր հասկանալ, բայց այս մեկն անմտություն էր: Նա ծածկեց տղային վերմակով և ուղարկեց բժշկի հետևից:

Յերբ բժիշկը յեկավ, Ջոննին հանգիստ քնած էր, բայց իսկույն և եթ զարթնեց և անտրտունջ թույլ տվեց շոշափել զարկերակը:

— Վոչինչ չկա, — հայտարարեց բժիշկը: — Շատ է թույլ, անհամար բոլորը, վոսկրների վրա ամենեվին միս չկա:

— Նա միշտ ել այդպես էր, — ասաց մայրը:

— Հիմա հեռացի՛ր, մա՛յր, և թող մի կո՛ւշտ քնեմ:

Ջոննին խոսում եր առանց հուզվելու, հանդարտ, նույնպիսի հանդարտությամբ շուտ յեկավ կողքի վրա ու քնեց:

Ժամի տասին նա արթնացավ և հագնվեց: Նա գնաց խոհանոց, ուր գտավ իր մորը, յերկյուղալի արտահայտությունը դեմքին:

— Յես հեռանում եմ մայր, և ուզում եմ հրաժեշտ տալ քեզ:

— Ու՞ր, հարցրեց մայրը, դարմանքի արտահայտությունը դեմքին:

— Չե՛մ իմանում... Ուր վրձ աչքս կտրի:

— Իսկ աշխատա՞նքը. — հարցրեց նա դողդուջուն ձայնով:

— Յես այլևս աշխատանքի չե՛մ գնա յերբեք:

Ջոննիի մայրը կայծակնահար յեղավ նրա խոսքերից:

— Այդ ի՞նչ է պատահել քեզ. — հարցրեց նա, իր ձայնին խստություն տալու թույլ փորձ կատարելով:

— Յես բացատրեմ քեզ, — ասաց Ջոննին — յես սարսափելի հոգնած եմ: Յես մշտական շարժման մեջ եմ գտնվում այն ուրից, յերբ լույս աշխարհ յեկա: Յես հոգնել եմ շարժվելուց և այլևս չեմ ուզում շարժվել: Հիշի՛ր, թե վո՞նց եյի աշխատում յես ապակու գործարանում: Յես սովորաբար 300 դյուժին խցան եյի կապում

որական, հիմա յես հաշվեցի, վոր ամեն մի սրվակի հետ յես տասը տեսակ տարբեր շարժումներ եմ արել: Դա կազմում է 36.000 շարժում որական: Տասն որում՝ 360,000 շարժում: Մի ամսում՝ 1.080.000, դրանից դուրս արի 80 հազարը, մնում է մեկ միլիոն շարժում մի ամսում — տարեկան՝ 12 միլիոն շարժում:

Ջուլհահանոցում յես ավելի շատ շարժումներ եյի անում: Դա կազմում է 25 միլիոն մի տարում և ինձ թվում է, վոր այդպիսով յես շարժվում եմ, համարյա միլիոն տարի:

— Այս շաբաթ յես բոլորովին չեմ շարժվել: Ամբողջ ժամերով յես վոչ մի շարժում չեմ արել: Հավատացնում եմ քեզ, վոր շատ հաճելի յեր նստել այդպես ամբողջ ժամերով, վոչինչ չանելով: Յես առաջ յերբեք բախտավոր չեմ յեղել: Յես յերբեք հանգստություն չեմ ունեցել: Յես ամբողջ ժամանակ շարժման մեջ եյի: Այդպիսի կյանքով չի կարելի բախտավոր լինել: Յե՛վ յես հիմա վոչինչ չպիտի անեմ: Յես պետք է նստեմ ու նստեմ, հանգստանամ ու հանգստանում և հետո՝ նորից հանգստանամ:

— Հապա ի՞նչ պիտի անեն Ուիլն ու յերբխաները, — հարցրեց մայրը հուսահատված:

— Այո՛, Ուիլն ու յերբխաները... կրկնեց նա.

— Յես գիտեմ, մա՛յր, թե դու ի՞նչի մասին եյիր յերազում Ուիլի համար: Դու ուզում եյիր պահել նրան դպրոցում և հաշվապահ դարձնել,



բայց հիմա այդ չի կարելի անել — յես հեռա-  
նում եմ: Նա՛ պետք ե գնա աշխատանքի:

— Յե՛վ այդ նրանից հետո, հենց վոր յես  
քեզ ճանապարհի վրա դուրս բերի, — ասաց  
մայրն արցունքով:

— Դու ինձ յերբե՛ք ճանապարհի վրա չես  
դուրս բերել, — առարկեց Չոննին փաղաք-  
չական թախիժով: — Յես ինքս եմ ինձ դուրս  
բերել, և հենց յես ինքս ել դուրս եմ բերել  
նաև Ուիլին: Նա մեծ ե ինձանից, ավելի հաստ  
և բարձր: Յես կարծում եմ, վոր յերբ յես  
յերեխա եյի, վատ եյի սնվում: Յերբ նա  
ծնվեց և յերեխա յեր, յես աշխատում եյի և  
սնունդ եյի վաստակում նույնպես և նրա հա-  
մար: Բայց այդ վերջացել ե: Յես հոգնել եմ:  
Հիմա յես հեռանում եմ: Մի՞թե դու ինձ չես  
ասի՛ գնաս բարով:

Մայրը չեր պատասխանում: Նա լաց եր  
լինում: Չոննին մի քիչ կանգնեց շեմքում,  
հետո դուրս յեկավ անից և գնաց փողոցով:

— Այո՛, յես վոչինչ չպիտի անեմ — ասաց  
նա կիսաձայն, վճռական յեղանակով:

Չոննին յերկար գրոսանք կատարեց, իսկ  
առաջ նա համարյա յերբեք չեր գրոսնում:  
Յերբ նա անցնում եր ջուտի գործարանի մո-  
տից այնտեղից հասնում եր ջուլհականոցի  
խուլ դղրդյունը, և նա ժպտաց: Դա համեստ,  
խաղաղ ժպիտ եր: Նրա մեջ վոչ վոքի և  
վոչնչի, նույնիսկ մեքենաների դեմ ատելու-

թյուն չկար: Նրա մեջ դառնություն չկար,  
վոչինչ, բացի հանգստության անչափ ծարա-  
վից:

Տներն ու գործարանները պակասում եյին,  
բաց տեղերը շատանում, նայած՝ թե Չոննին  
ինչպես եր մոտենում ծայրամասին: Վերջա-  
պես քաղաքը մնաց հետևում, և նա գնաց  
յերկաթգծի կողքն ընկած արահետով:

Չոննին անցավ յերկաթուղու փոքրիկ  
կայարանը և պառկեց խոտի վրա՝ ծառի տակ:  
Ամբողջ որը նա պառկած մնաց այնտեղ,  
դիտելով թռչուններին կամ իր վրա տարած-  
ված ծառի ճյուղերի միջով յերկնքին նա-  
յելով:

Յերբ աղջամուղջն իջավ, ապրանքատար  
գնացքը դղրդյունով մոտեցավ կայարանին:  
Շոգեքարչը քաչեց վագոնները սլաքի համե-  
մատ ուրիշ ուղու վրա: Չոննին սողաց գնացքի  
յերկայնքով: Նա բացեց մի դատարկ վագոնի  
կողքի դուռը, դժվարությամբ, մի կերպ  
մագլցեց այնտեղ և իր հետևից դուռը փակեց:  
Շոգեքարչը սուլեց և գնացքը շարժվեց: Չոն-  
նին պառկել եր հատակին և ժպտում եր մթու-  
թյան մեջ:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



ՀՀ Ազգային գրադարան



NL0387134

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

649

ДЖЕК ЛОНДОН  
ЗАБАСТОВАЛ  
ГИЗ ССРА ЭРИВАНЬ